Դանիել Վարուժան

Միջօրե

Այս այն ժամն է՝ երբ կալին մեջ Աշխատանքն առած կանգ՝
Արևուն տակ կը հևա:
Կը նընջե մեն մի մըշակ:
Քարայրին մեջ հեռակա
Հեծեծագին կը մեռնի զով Ջեփյուռը ամրափակ:

Միջոցին սիրտն՝ հըրեղեն ցանցի մը մեջ սեղմված՝
Կը բաբախե հազի՛վ հազ:
Լըռության մեջ շողարծարծ
Ի՜նչ հըծծյուններ, ի՜նչ երազ.
Եվ ի՜նչ բույրեր առտըվան եղեգներուն կըտըրված:

Կը քընանան անտառներ թուխ կողերուն վրա սարին՝
Արծաթահյուս քողի տակ
Կապույտին մեջ, առանձին,
Կ'երթա ամպ մը կաթնորակ
Փափուկ բուրդեն ծըվեններ թողլով ժայռի կատարին:

Կ'ընդունի հողն իր սըրտին մեջ՝ իր սըրտեն ճեղքելով՝
Լույսին նիզակն արյունոտ:
Աղբյուր մը հոն, ծառին քով,
Կը հեծեծե նըվաղկոտ՝
Իր ոռոգած ծաղիկին վրա մեռնի՛լ չուզելով:

Գոմեշներ՝ լուծը լքած՝ ճահիճին մեջ կը պառկին
Իրենց բերնեն հոսելով
Թելերն արծաթ շողիքին:
Սայլերն, անդին, դեզին քով,
Հըսկա ցռուկներ ցրցած՝ դատարկությա՛ն կը նային:

Այս այն ժամն է, ո՛վ հոգիս, որ ճըպուռին պես մինակ՝
Կատարներուն վրա մընաս.
Անդորրին մեջ անապակ
Դուն քու երգով արբենաս՝
Ինչպես արևն իր լույսով, իր լույսին հետ մի՛ն-մինակ: